

ՍՈՒՄԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բան. գիտ.դոկտոր

ՊԵՐՃ ՊՈՌՇՅԱՆԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԳՐԱՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ*

Բանալի բառեր - Պերճ Պոռշյան, Հովի.Թումանյան, Ղազարոս Աղայան, «Ազգային պաշտպանության խնդիրը և Ղ.Աղայանը», «Մեր ազգային վիպասան Պերճ Պոռշյանցին՝ իր քառասնամյակի օրը», Ղ.Աղայանի հորեղանը:

Յուրաքանչյուր երիտասարդ գրող իր ստեղծագործական կյանքի արշալույսին հենվում է իրենից առաջ ստեղծված ազգային մշակույթի՝ դարերի ընթացքում կուտակված հոգևոր հարստության վրա: Սակայն ամեն մի արվեստագետ Նախ և առաջ որոշակի ազդեցություն է կրում մերձավոր Նախորդներից: Պերճ Պոռշյանը այն գրողներից է, որի ստեղծագործության հետ Հովհաննես Թումանյանը սերտ ու անմիջական գրական առնչություններ է ունեցել այնպես, ինչպես հայ նոր գրականության խոշորագույն դեմքերի՝ Խաչ.Արուսեանի, Մ. Նալբանդյանի, Ռ.Պատկանյանի, Ղ. Աղայանի և Բաֆֆու հետ: Նրանց, այդ թվում նաև Պ.Պոռշյանի գրական ավանդույթները ժառանգորդության օրենքով փոխանցվեցին երիտասարդ բանաստեղծին և իրենց ազդեցությունն ունեցան պոետի ստեղծագործական դիմանկարի ձևավորման գործում, որն, իհարկե, հաղթահարվեց շատ շուտով, նույնիսկ մինչև գրական հասունության հասնելը:

19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին ազգային ու սոցիալական բազմակնճիռ հարցերը միավորում էին հայ գրականության ապագա դասականներին. Թե՞ հանրային – քաղաքական, թե՞ անձնական կյանքի դժվարությունները հաղթահարելիս հայ գրողները հաճախ էին դրսևորում ընդհանուր ձգտումներ ու պատկերացումներ: Նրանք ապրում էին միևնույն հոգսերով:

1898 թ. Բաքվի Հայոց Մարդասիրական ընկերությունը Նպաստ

* Հոդվածն ընդունված է տպագրության 18.04.2020 թ.:

Է Նշանակում Ղ. Աղայանին, Հովհ.Թումանյանին և Շիրվանզադեին: Պ.Պռոշյանն ուրախանում է, որ վերջապես հայ գրողն իր հոգսերով արժանացել է ուշադրության: Նույն թվի փետրվարի 6-ին Պ.Պռոշյանը Բաքվի Մարդասիրական ընկերությանն ուղարկում է մի խնդրագիր, որը հավաստում է վիպասանի ազնիվ, հոգատար վերաբերմունքը գրչակից ընկերների, այդ թվում Թումանյանի նկատմամբ: Նրա խոսքերով «ազգիս բազմաշխատ գրական մշակներին» օժանդակելու ընկերության որոշումը «ամենանպաստավոր և գիտակցական գործողություններից մեկն էր»¹, որը Նշանակում էր «գնահատել մտավոր աշխատանքը՝ խրախուսելով սակավաթիվ գրական գործիչներին չղաղարելու հայ գրականությանը ծառայելու սուրբ գործից»²:

Մեկ տարի անց՝ 1899 թ. մայիսի 16-ին, երբ տոնվում էր Պ.Պռոշյանի գրական գործունեության 40-ամյա հոբելյանը, Հովհ. Թումանյանը ամենաակտիվ մասնակիցներից էր Գ.Սունդուկյանի, Ղ.Աղայանի և այլոց հետ միասին: «Տարագի»՝ մայիսի 17-ի համարը ամբողջությամբ ձոնվեց Պ.Պռոշյանին: Նույն օրը վիպասանին բանաստեղծություն ձոնեց Նաև Հովհաննես Հովհաննիսյանը:

Պ.Պռոշյանին Հովհ.Թումանյանը համարում էր այն հայ գրողներից, որոնք թեև զուրկ են դիպլոմներից, «բայց ի ծնե կոչված են գործերի ներքին իմաստը թափանցելու, սրտերի գաղտնիքը կարդալու և այնտեղից խոսելու ժողովրդի հետ»³: Բանաստեղծը վիպասանի արժանիքներից էր համարում կյանքի ճանաչողությունը, ռեալիզմը, այն, որ նա «Մեզ տալիս է գյուղական կյանքը իր ամբողջ մերկությամբ, գյուղական տիպերի մի ամբողջ ալբոմ են ներկայացնում Նրա բոլոր գրվածքները, առանց որևէ տենդենցի»⁴: Ինչպես նկատել է ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանը. «Գավառական կյանքի գեղարվեստական լայն համայնապատկերը, որ գծագրել է Պռոշյանն իր վեպերում, պատմականորեն եղավ մեկն այն հիմքերից, որոնք Նախապատրաստեցին հայ գյուղաշխարհի արտացոլումը Թումանյանի պոեզիայում և արձակում արված շատ ավելի բարձր գեղագիտական դիրքերից»⁵:

1 Սարիբեկ Մանուկյան, «Պերճ Պռոշյան» (Նշանավոր մարդկանց կյանքը մատենաշար), Եր. «Արևիկ» հրատ., 1987, էջ 127:

2 Նույն տեղում:

3 Հովհ.Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, հտ. 6, Եր., 1994, «ՀՀ ԳԱԱ հրատ.», էջ 115:

4 Նույն տեղում, էջ 534:

5 Էդվարդ Ջրբաշյան, Թումանյանը և հայ գրականության ավանդույթները,

Դեռևս «Ծխածան» աշակերտական գաղտնի ընկերության պարապմունքներին, երբ չկար հայ գրականության համակարգված պատմություն, Թումանյանը կարդում էր դասախոսություններ, որոնցում արծարծվում էր նաև Պ.Պռոշյանի դերը մեր գրականության պատմության կոնկրետ շրջափուլում 19-րդ դարի երկրորդ կեսին: Թումանյանի այդ ելույթները պահպանվել են «Մեր Նախորդ շրջանի բանաստեղծները» անավարտ ուսումնասիրության մեջ, որտեղ իմաստալի ընդհանրացումներ են կատարվում հայ գրականության հանգուցային հարցերի շուրջ: Դրանք հիմնականում վերաբերում էին տարաշխարհիկ ու բնաշխարհիկ գրողներին, ազգային տաղանդի յուրահատկություններին, «հայի ոգի ու շունչ արտահայտելու» ունակությանը: Բանաստեղծը օտարության մեջ ապրող («պանդուխտ ժողովուրդ - պանդուխտ գրականություն») տարաշխարհիկ գրողներին՝ Ռ.Պատկանյանի, Ղ.Ալիշանի, Ս.Շահագիզի հայրենասիրությունը հակադրում է հայրենի միջավայրից ազդակներ ու ներշնչանք ստացող գրողներին, այդ թվում Պ.Պռոշյանի ստեղծագործությանը: Թումանյանի վստահեցմամբ վիպասանի երկերում կա հայրենիքի ու հայ ժողովրդի իրական կյանքի ոչ վերացական ընկալում: 1907թ. հունիսի 10-ին բանաստեղծը Թիֆլիսի ժողովրդական հաալսարանի պարապմունքին կարդացած իր դասախոսության մեջ, որի համառոտագրությունը կատարել էր Ա. Մեիրաբյանը, անդրադարձ էր կատարում նաև Պ.Պռոշյանին, ընդգծում նրա՝ «հարազատ լեզվով» գրականության ստեղծումը¹:

Հայ գրականության պատմության համատեքստում Պ.Պռոշյանի դերին բանաստեղծն անդրադառնում է նաև տարիներ անց, 1916 թ. նոյեմբերի 25-ին Հայ գրողների կովկասյան ընկերության հերթական երեկույթում կարդացած «Հայոց գրական լեզվի խնդիրը» թեմայով զեկուցման մեջ: Վերստին խոսելով տարաշխարհիկ և բնաշխարհիկ գրականության մասին՝ պոետն արժևորում է Պ.Պռոշյանի ստեղծագործությունը՝ իբրև մայր երկրից մնուցվող, մայրենի լեզվով գրականություն: «Լեզուն ու՛ր, գրականություն՛ն ուր... Գրականությունը գաղութների ձեռքին, լեզուն մայր երկրում... բնաշխարհիկ լեզուն, բուն ժողովրդի հետ միասին ալեկոծվում էր արյան ու արտասուքի ծովի մեջ և, եթե շատ թե քիչ ազդում էր մեր գրական լեզվի վրա, ազդում էր... իր ծոցից ելած սակավաթիվ գրողների ձեռքով, էստեղ մի Աբովյանի, կամ մի Աղայանի ու Պռոշյանի, Էստեղ

Եր. ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ. 1994, էջ 67:

1 Հովհ. Թումանյան, Նշված աշխատ. հտ. 6, էջ 534:

մի խրիմյանի կամ Սրվանձտյանի»¹: Առավելությունը տալով բնաշխարհիկ լեզվին՝ պոետը կարևորում էր վիպասանի լեզվի և ժողովրդական ոճի նշանակությունը:

Հովհ.Թումանյանի և Պ.Պռոշյանի երկերում կան որոշ կոնկրետ պատկերային ընդհանրություններ: «Սոս և Վարդիթեր» վեպում Համբարձման տոնի նկարագրությունից 40 տարի անց ստղծված «Անուշ» պոեմի տարբերակում ներկայացվող նույն տոնի նկարագրության մեջ նկատելի են համանման գեղարվեստական մանրամասներ, կենցաղային-ազգագրական բնույթի որոշ գծեր՝ ընդհուպ «Համբարձում յայլա՛, յայլա՛ ջան, յայլա՛» կրկներգը, որի աղբյուրը երկու գրողների համար էլ եղել է ժողովրդական բանահյուսությունը:

Պ.Պռոշյանը նույնպես բարձր էր գնահատում երիտասարդ բանաստեղծի ստեղծագործությունը, մասնավորապես «Լոռեցի Սաքուն» պոեմը: Հայտնի է, որ շատերը թերահավատությամբ ընդունեցին Սաքունի խելագարվելու փաստը՝ համարելով այն անհամոզիչ: Սակայն քիչ չէին պոեմը անվերապահ արժևորողները: Նրանց շարքում Թումանյանն առաջինը նշում է Պռոշյանի անունը. «Այս պոեման մի քանի ուսանողներ և գրողներ մի շատ հաջողված հոգեբանական ճշմարտություն են համարել և հավանել. մանավանդ պ.Պերճը յուր «հրաշալի է» և այլ խոսքերով»²:

Երկու գրողները հանդիպել են նաև գրական ընթացիկ կյանքի խաչմերուկներում՝ համատեղ ծառայելով ազգային մշակույթի ու գրականության ընթացիկ շահերին: 1900-1902 թթ. երվանդ Լալայանը եռանդուն գործունեություն էր ծավալել «Ազգասիրական հանդեսը» նյութապես ապահովելու համար հրատարակչական մի մարմին ստեղծելու նպատակով: Այդ շրջանում կառավարությունը թույլ չէր տալիս ազգագրական և առհասարակ ազգային ընկերություններ հիմնել, ահա թե ինչու Լալայանի, Գևորգ Ասատուրի և մի բանվորի ստորագրությամբ կնքվում է պայմանագիր, ըստ որի՝ հիմնվում է «Ազգագրական ընկերակցություն»՝ առևտրական հիմքերի վրա: 1900 թ.՝ նշված ընկերակցության ստեղծումից անմիջապես հետո, նրան պաշտոնապես իբրև «առևտրական ընկերներ» անդամագրվեցին Հովհաննես Թումանյանը, Պերճ Պռոշյանը, Գևորգ Ղարաջյանը և այլք: Իսկ վարչության նախագահ են ընտրում դրամատերերի՝ Մելիք-Ազարյանին և այլոց, որպեսզի թաքցնեն ընկերության բուն

1 Նույն տեղում, էջ 292:

2 Նույն տեղում, հտ.9, էջ 24:

Նպատակը: Այս շրջանում բանաստեղծն ու վիպասանը հանդիպում էին եր. Լալայանի բնակարանում՝ Սաայրոնայա փողոցի վրա, որտեղ այսպես կոչված պաշտոնական նիստերը վերածվում էին գրական երեկոյթների: Այսուհետ Պ.Պռոշյանը Հովհ.Թումանյանի հետ միասին դարձավ Գրողների միությունն ստեղծելու առաջամարտիկներից:

Բանաստեղծը վկայում է ժամանակին գրական շրջաններում վիպասանի ունեցած հեղինակությունը: Նա գրում է. «Ամեն անգամ, երբ ես կամ Էն առիթով հայ գրողների ցանկը կազմում էինք... միշտ սկսում էինք՝ Պռոշյան, Աղայան»¹:

1912 թ. դեկտեմբերի 16-ին Հայ գրողների կովկասյան ընկերության առաջին երեկոյթին ընկերության նախագահը՝ Հովհ. Թումանյանը, իր բացման խոսքում Կովկասի Հայոց Բարեգործական ընկերության դահլիճում հավաքված բազմությանը խնդրում է՝ ի թիվս այլ հայ գրողների, հոտնկայս հարգել Պերճ Պռոշյանի հիշատակը ²:

Գրողի անապահովության ցավալի խնդիրը մշտապես եղել է հայ մտավոր շրջանների ուշադրության կենտրոնում: Գրական տաղանդների անկաշկանդ զարգացումը հաճախ կախման մեջ է եղել մեկենասների, զանազան միավորումների և առհասարակ հանրային կամ պետական աջակցությունից: Իզուր չէր Թումանյանը հայ գրականությունը անվանում խանգարված գրականություն, իսկ հայ գրողներին՝ խանգարված գրողներ, քանի որ միայն գրականությանը նվիրվելու փոխարեն նրանք ստիպված էին լինում զբաղվել այլ աշխատանքով՝ իրենց և ընտանիքների գոյությունը պահպանելու համար: Նկատի ունենալով հայ գրողի կյանքի անբարենպաստ հանգամանքները՝ մի առիթով Թումանյանն ասել է Ստեփան Չորյանին. «Աբովյանը մե՛ծ մարդ է, մե՛ծ սրտի ու մեծ շնչի տեր, եթե դժվարություններ չլիներին՝ ավելի մեծ մարդ կդառնար... **Պռոշյանը. կարծում եք պակա՞ս տաղանդ էր. բայց մեր իրականությունն ու կյանքի անապահովությունը չթողին, որ նա զարգանա և արվեստի համաչափ գործեր տա**»³: Իսկ «Ազգային պաշտպանության խնդիրը և Ղ.Աղայանը» հոդվածում (1916 թ. հունիս) բանաստեղծը բարձրացնում է հայ գրողի նյութական ապահովության խնդիրը, ընդգծելով արվեստն ու գրականությունը իշխանությունների կամ մեկե-

1 Նույն տեղում, հտ.7, եր. 1995, էջ 268:

2 Նույն տեղում, հտ. 6, էջ 391:

3 «**Թումանյանը ժամանակակիցների հուշերում**», (Այսուհետ՝ ԹԺՀ), եր., 1969, Հայկական ՍՍՀ ԳԱԱ հրատ., էջ 110:

Նասների կողմից հովանավորելու անհրաժեշտությունը: Այստեղ Նա հիշատակում է Աղայանի «Տարրական ճշմարտություններ» հոդվածը, որի սկզբից պոետի մեծ բարեկամը Նրան էր հանձնել մահից առաջ: Աղայանը Մխիթարյանների մեկենասների, Գրիգոր Արծրունու, Ալեքսանդր Մելիք-Հայկազյանի և արվեստի այլ հովանավորների կարևորությունն ընդգծելով՝ գրում է. «Պռոշյանը իր «Հացի խնդիր» վեպը գրել է հատկապես հացի խնդրի համար և տպագրել է Աբգար Հովհաննիսյանի արած օժանդակությամբ, անունն էլ Նրա համար է դրել «Հացի խնդիր», մի անուն, որ ուրիշ ոչ մի կապ չունի վեպի բովանդակության հետ»¹:

Անշուշտ, կյոթական միջոցների պակասն էր, որ հայ գրողներից շատերը չէին կարողանում ստանալ բարձրագույն կրթություն: Նկատի ունենալով ժամանակի գրողների թերիմացությունը տաղաչափության, գրական ժանրերի և գրականության տեսության այլ խնդիրներից, Հովհ. Թումանյանը նկատում է. «Այ, օրինակ, Պռոշյանը: Չարմանալի մարդ էր. գրական ձևերից բան չէր հասկանում, մինչև վերջն էլ վեպին հոդված էր ասում «Տեցերը» տպվում էր «Մուրճում». գալիս էր, թե՛ «Այ տղա, հոդվածս կարդո՞ւմ ես, ո՞նց ա»... Բայց **Ժողովրդի կյանքը Էնպես էր ճանաչում, մեր հին ու Նոր լեզուն Էնպես գիտեր- էլ դու պրծար...**»²:

Սակայն Թումանյանը վերապահությամբ էր մոտենում բարբառներից օգտվելու Պ.Պռոշյանի ու Նաև Խաչ.Աբովյանի մոտեցումներին՝ ասելով. «Ժողովրդական լեզու էլ, ո՞՞ն էլ որ ասում ենք, դա չհասկանաք Էնպես, ինչպես Աբովյանն ու Պռոշյանն են անում: Չէ. էդ ո՞՞նե՞րը պետք է գործ ածել ընտրությամբ, ճաշակով, տեղին...»³:

Պերճ Պռոշյանի անապահովության խնդիրը ժամանակին բազմիցս արծարծվել է հրապարակայնորեն: Դրանցից շատերին է անդրադարձել բանաստեղծը՝ ավելի հաճախ դրսևորելով գրողի արժանապատվությունը պաշտպանող հպարտ կեցվածք: Նա ամեն անգամ գայրույթով էր լցվում, երբ հայ գրողը ներկայացվում էր խեղճ ու աղքատ մի խավ: Այդպես էր Նաև Պռոշյանի հուղարկավորության օրերին:

1907թ. վիպասանի թաղումից (դեկտեմբերի 2) մի շաբաթ անց՝ դեկտեմբերի 9-ին, «Վտակում» տպագրվում է Թումանյանի «Վիրավորական հարգանք» հոդվածը: Բանաստեղծը վրդովված էր .«Բաց

1 Թումանյան, նշված աշխատությունը, հտ. 7, էջ 265:

2 ԹԺՀ, էջ 111:

3 Նույն տեղում, էջ 113:

գերեզմանի եզերքին աշխատում էին վեր հանել վիպասանի փառքն ու տաղանդը և... մինը գոռում էր, թե նա ածուխ էր վաճառում, մյուսը աղաղակում էր, թե նա դռնեդռն էր ընկած, երրորդը նրա ընտանիքին նմանեցնում էր «ցիգանի ընտանիքի», չորրորդը հավատացնում էր, թե նա մերկ էր, հինգերորդը ողբում էր, թե սոված, իհարկե, վեցերորդին էլ մնում էր եզրակացնել, որ այդ բոլորից նա մեռավ...

Այս լավականության ու հառաչանքի ողորմուկ ձայնը սովամահի ու մերկության ողբը տարածեցին ամբողջ գրականության վրա..

ԸՆՀի նման է այս. այս խեղճ ու անճարակ աղմուկը, որ ամեն անգամ բարձրանում է այս կամ այն գրական մարդու դագաղի վրա-այսքան սուտ և այսքան տգեղ ու վիրավորական միանգամայն...

Բայց ո՞վ չի նեղություն քաշում իր մասնավոր կյանքում: Չարմա-նայի ու զարհուրելի ԻՆՀ կա այստեղ:

Ահա և Պռոշյանը: Մեռավ: Ռ՞վ է ասում, թե նա քաղցած էր ու մերկ: Ով որ էլ լինի - սուտ է ասում: Իսկ թե եղել է այս կամ այն պաշտոնին - ԻՆՀ կա արտասվելի: Եղել է թեմական տեսուչ, ուսուցիչ, լուսանկարիչ, վերջապես, ամենասոսկային, մի քանի օրով ի միջի այլոց, ածուխի առուտուր է սկսել և տեսել է օգուտ չի անում, թողել է: Այս հո չի՞ նշանակիլ, թե նա սոված էր կամ տկուր:

Ո՛հ, սոված ու մերկ չեն հայ գրողները... Դժբախտությունն այդ չի, այլ այն, որ գրականությունը ապրուստ չի տալիս գրողին... Այս արդեն ուրիշ խնդիր է: Չեք կարողանում գրականություն ու գրող պահել, այդ հերիք չի, այժմ էլ պետք է խնդրել, որ ճառքեր չասեք նրանց վրա, երբ մեռնում են »¹, գրում է բանաստեղծը:

Չնայած երեսուներկու տարվա տարբերությանը Պռոշյանի և Թումանյանի միջև ստեղծվել էին ջերմ բարեկամական, **ընկերական հարաբերություններ**: Նրանք միասին էին հայ գրականության ընթացիկ կյանքի խնդիրներն արծարծելիս:

1897-98 թթ. Թումանյանի տանը կազմակերպված գրական խորհրդակցություններին ու ժողովներին մասնակցում էր նաև Պ. Պռոշյանը Դ. Աղայանի, Շիրվանզադեի, Մուրացանի, Փափագյանի, Լևոն Մանվելյանի հետ միասին: Նույն շրջանում այդպիսի ժողովներ տեղի են ունեցել նաև Պերճ Պռոշյանի տանը: Այնուհետև վիպասանը սկսում է այցելել նշանավոր «Վերնատուն»: Այդ մասին վկայում են ինչպես ժամանակակիցները, այնպես էլ Պռոշյանի կենսագիրներից Սարիբեկ Մանուկյանը. նա գրում է. ««Վերնատունը» փորձի փոխա-նակության և գիտելիքների հարստացման յուրատեսակ դպրոց էր:

¹ Հովի.Թումանյան, Նշված աշխատ., հտ. 6, էջ 154-156:

Պռոշյանը կյանքի հարուստ փորձ ուներ, ուստի Նրա Ներկայությունը միշտ ցանկալի էր, խոսքը՝ հեղինակավոր»¹: Վիպասանը, իհարկե, չէր մտնում «Վերնատան» մշտական անդամների լուսավոր վեցնյակի մեջ, սակայն նա հայ գրական ամենանշանավոր սալոնի մշտական հյուրերից էր, այն գրողներից, որոնք համախմբվել էին «Վերնատան» շուրջը²: Պ.Պռոշյանի երկերը հաճախ էին քննարկվում գրական այդ կենտրոնում, երբեմն էլ վերնականները քննարկումները շարունակում էին Նրա սահմաններից դուրս: Այսպես 1901 թ., դեկտեմբերի 30-ին Լ. Շանթը Անվերսից թոմասյանին գրում է. «Պռոշյանցի վիպակն է, սկիզբն ու վերջը, իհարկե, ավելորդ, քիչ մըն ալ գուցե անճարակ գրված, բայց մեջը կյանք կա, կռիվ՝ իդեալիզմի խորտակումը նաթոռալիզմի մեջ, ամենայն տեղ Նույնը, այդ հինգերորդ գինեգիժը գիժ է հենց սկզբեն, որովհետև իդեալի մարդն է, տարբերը, բացառիկը, մաքուրը...»³:

Լեոն փաստում է. «Այդ գրական ընտանիքն ուներ երկու մեծ պապեր: Մեկը Պերճ Պռոշյանն էր, մյուսը՝ Ղազարոս Աղայանը... Որպեսզի զուր տեղը չբարձրանա «Վերնատան» անթիվ սանդուղքներով, նա Նախ և առաջ ուզում էր տեղեկանալ տաճին և Հովհաննեսը թե ոչ: Եվ բակից նկատելով վերևի պատշգամբում խաղացող երեխաներին՝ ձայն էր տալիս.

- Այ լալկոտներ, Էն գյաղեն տաճին ա...

«Լալկոտները թոմասյանի երեխաներն էին, իսկ «գյաղեն» ինքը՝ թոմասյանը»⁴: Նվար Այդ մասին գրում է Նաև Նվարդ թոմասյանը. «Պերճ Պռոշյանը մեզ մոտ հաճախ էր լինում: Մեզ բոլորիս, առհասարակ երեխաներին, ասում էր «լալկոտներ», իսկ հայրիկին, Աղայանին, Շիրվանզադեին՝ «գյաղաներ»: Դա էր Նրա ոճը: Ծեր մարդ էր, գալիս էր բակի մեջտեղը կանգնում և իր բամբ ձայնով կանչում. «Եյ, լալկոտներ, Էն գյաղեն տաճին ա...»»⁵:

Թոմասյանը սովորություն ուներ զրուցելիս պատմություններ ներկայացնել իր և գրական ընկերների մասին, հետաքրքիր դեպքեր հատկապես Ղ.Աղայանի, Խրիմյան Հայրիկի, Ավ. Արասխանյա-

1 Նույն տեղում, էջ 152:

2 ԹԺՀ, էջ 12:

3 Թոմասյան, Ուսումնասիրություններ և հրապարակումներ, հտ 4, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1985, էջ 349: Տես նաև Լ.Շանթ, Երկերի ժողովածու ինը հատորով. Նամակներ և բացիկներ, Եր., 2017, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 86:

4 ԹԺՀ, էջ 57:

5 Նվարդ թոմասյան, Հուշեր և զրույցներ (այսուհետ Հ2), Եր., 1987, «Լույս» հրատ., էջ 15:

Նի կյանքից: Ինչպես հավաստում է բանաստեղծի դուստր Նվարդը. «Ամանծին սիրով էր խոսում Պռոշյանի մասին, որը հարազատ էր իրեն իր ժողովրդական խառնվածքով: Պատմում էր վիպասանի կյանքից առանձին ծիծաղաշարժ դեպքեր՝ իրեն հատուկ հումորով և ժպիտը դնելով»¹:

Թումանյանի այդ պատմություններից էր Պռոշյանի՝ շուկայից տուն գնալու դրվագը. «Իմ ուշադրությունը հանկարծ գրավեցին Պերճի ջովստ գրպանները: Նրանք տարօրինակ կերպով շարժվում էին, դողում: Հարցրի. Էդ ի՞նչ են ջեբերդ: Նա պատասխանեց սառնասրտությամբ. «Մի քիչ ցոցխալ ձուկ եմ առել, ջեբերոմս տանում եմ տուն, որ մորթենք, եփենք»»²:

Մարգար Ավետիսյանը բանաստեղծի հյուրասեր խառնվածքը համեմատում էր Պռոշյանի հետ. «Այս նահապետական հյուրընկալությամբ Թումանյանը նման էր նահապետականության կրքոտ երկրպագու, հյուրամոլ Պռոշյանին: Բայց ինչ որ Պռոշյանի մոտ զուտ գյուղական-նահապետական էր, Թումանյանի մոտ այդ նահապետականությունը ձուլվում էր եվրոպականության հետ»³:

1890-ական թթ. երեկոյան ժամերին հաճախ էին երկու գրողները հանդիպում Արծրունու թատրոնին կից այգում: Բանաստեղծի կինը՝ Օլգա Թումանյանը, վկայում է. «Երեկոներն այս նույն այգում գրույցի էին հավաքվում և զարեջուր խմում Օհանեսը, Աղայանը, Պռոշյանը, Շիրվանը»⁴:

Թումանյանը ժամանակի անեամեծ հաշտարարի համբավն ուներ: Նա մեծ հեղինակություն էր վայելում գրական զանազան հոսանքների և ուղղությունների, քաղաքական տարբեր համոզմունքների, երիտասարդ և ավագ սերունդների, նույնիսկ դրացի ազգերի շրջանում: Դրա շնորհիվ նա բազմիցս հաշտարարի դեր է կատարել, այդ թվում նաև միմյանց հետ տարիներով չխոսող գրողների միջև: Նվարդ Թումանյանը գրում է. «Գրական միջավայրի մեծ հաշտեցնողն ու հուսադրողն էր: Ամեն ընդհարում, գծողություն կարողանում էր մեղմացնել, վերացնել... Մերձավորներն ասում էին՝ նա զարմանալի կերպով կարողանում էր իրար դեմ լարված կողմերը հաշտեցնել, հանգստացնել, ներդաշնակություն, խաղաղ տրամադրություն ստեղծել...

1 Նույն տեղում, էջ 75:

2 ԹԺՀ, էջ 57-58:

3 Նույն տեղում, էջ 200:

4 Նույն տեղում, էջ 340:

Կարողանում էր իրար հետ գծոված մարդկանց հաշտեցնել, նման դեպքեր եղել են ոչ միայն մեր գրողների, այլև վրաց գրողների կյանքից»¹:

Գարեգին Լևոնյանը հիշում է. «Պերճ Պոռչյանը, չգիտեմ ինչու, չէր սիրում Ղազարոս Աղայանին: Վերջինս այդ մասին անտարբեր էր և անոխակալ»²: 1902 թ. մայիսին պետք է տոնվեր Աղայանի հոբելյանը: Պոռչյանը դեմ էր և իր կարծիքն անթաքույց արտահայտում էր խմբագրատներում, դպրոցներում, գրական, հասարակական հավաքույթներում և այլն: Լուրջ հասնում է բանաստեղծին, և նա որոշում է հաշտեցնել երկու ընկեր գրողներին... Գարեգին Լևոնյանը պատմում է. «Թումանյանը մի տոմսակով մի օր ընթրիքի է հրավիրում իր «շատ հարգելի ու պատվական բարեկամ» Պերճ Պոռչյանին, ասենք ժամը 10-ին, իսկ Աղայանին խնդրում է նույն օրը գալ ժամը 11-ին: Ընթրիքի սկզբում Թումանյանը խոսք է բաց անում Աղայանի մասին...

- Լսած կլինես, Պոռչ, մենք որոշել ենք տոնել մեր Ղազարոսի հոբելյանը, ես կարծում եմ դու էլ, ընդունելով նրա երկարամյա բեղմնավոր աշխատանքը, ուրախ պիտի լինես դրա համար և չխնայես քո աջակցությունը:

- Հովհաննես, խնդրեմ ինձ ազատ թողնես այդպիսի պարտականությունից. դու գիտես, որ ես նրա հետ լավ չեմ. վերջապես ի՞նչ է նշանակում հոբելյան և ինչի՞ համար, ասա խնդրեմ...

- Ինչպե՞ս թե՛ ինչի համար, նրա գրական և մանկավարժական գործունեության համար. մենք ուզում ենք բարոյական գնահատումի հետ նրան փոքր ի շատե ապահովել և նյութապես...

- Եթե իմ գրվածքներս ուղտի վրա բառնաս, հագիվ թե տանի, իսկ Ղազարը ավելի խոսել է իր կյանքում, քան թե գրել: Գալով նրան նյութապես ապահովելու խնդրին, այդ էլ ես գտնում եմ ավելորդ, որովհետև նա իրենց գյուղում գինի ունի, թող բերի այստեղ, վաճառի ու ապրի... Ես մուշտարի կգտնեմ ու գինին կծախենք, պրծավ գնաց:

- Պոռչ ջան, արի ու գինի առնող մուշտարու նեղությունը մի՛ քաշի, մենք այդ գինին գյուղից բերել կտանք և Ղազարոսի հոբելյանի հանդեսը կատարելուց հետո մի լավ քեֆ կսարքենք ու կխմենք, քեզ էլ կընտրենք թամադա»³: Այնուհետև գալիս է Աղայանը՝ անտեղյակ,

1 ՀԶ, էջ 51:

2 ԹԺՀ, էջ 445:

3 Նույն տեղում, էջ 446:

որ այնտեղ է Պոռշյանը: Վերջինիս ողջունելով՝ թումանյանն ասում է. «Հա՛, շատ լավ արիր, որ եկար, Ղազարոս, մենք այս րոպեիս խոսում էինք քո մասին, Պոռշն ասում է, որ դու գյուղում գինի ունես վաճառելու և ինքը խոստանում է մուշտարի գտնել:

Աղայանը, այդ անսպասելի խոսքի վրա զարմացած, խոժոռ հայացք է գցում Պոռշյանի վրա.- «Ինչպե՞ս թե. իմ գինիների հետ ի՞նչ գործ ունի հարգելի պարոն մագիստրոսը»: Թե որքան է տևում խոսակցությունը երեքի մեջ... հայտնի է, բայց թումանյանի բնակարանից հյուրերը դուրս են գալիս թևանցուկ, հետևյալ օրը երեքը միասին լուսանկարվում են, և Պոռշյանը Աղայանի հոբելյանին մասնակցում է ամենայն եռանդով»¹:

Նվարդի վկայությամբ «Ղազարոս Աղայանը և Պերճ Պոռշյանը գտնված էին և տարիներով իրարից խռով: Հայրիկը շատ էր ուզում Նրանց հաշտեցնել: Մի կիրակի օր, առավոտը, Պոռշյանը հյուր է գալիս թումանյանին, և այդ օրը, ինչպես միշտ, Աղայանը ճաշին պետք է լիներ թումանյանի մոտ: Բանաստեղծը Պոռշյանին զբաղեցնում է մինչև ճաշի ժամը, ու Ղ.Աղայանը գալիս է: Ճաշում են միասին և այդ օրը երեքով միասին նկարվում են, հաշտությունը հավերժացնում այդ լուսանկարով»²:

Կիրակի օրերը Աղայանը պարտադիր թումանյանների տանն էր լինում, և Պոռշյանը սովորաբար այլ օր էր ընտրում Նրան այցելելու: Սակայն հաշտվելուց հետո Պոռշյանն այլևս չէր խուսափում կիրակի օրերը թումանյանի բնակարան գալուց: Մի կիրակի Աղայանն ու Պոռշյանը որոշում են առավոտյան միասին այցելել բանաստեղծին. Նվարդը հիշում է. «Նստում են զրուցում բավական երկար ժամանակ: Հայրիկը շատ է խնդրում, որ մնան ճաշի, սրանք թե՛ «ԶԷ, կիրակի օր է, մեր տները գնանք»: Գնում են: Բնակարանից դուրս գալիս ասում են՝ արի մեր Օհանեսի տան սանդուղքները համբարենք:

Հաշվելով իջնում են ցած և դուրս է գալիս Պոռշյանինը՝ 101, Աղայանինը՝ 102: Սկսում են վիճել և բարձրաձայն վիճելով հետ են դառնում նորից հաշվելով: Ճիշտն Աղայանի հաշվածն է լինում: Ադմուլի վրա հայրիկը դուրս է գալիս, կարծելով թե փոշմանել են, եկել են ճաշելու: Նրանք պատմում են եղելությունը, հայրիկի անեկդոտներին ավելացնելով ևս մեկը»³:

Սակավաթիվ են թումանյանի այն գրչակից ընկերները, որոնց

1 Նույն տեղում, էջ 447:

2 ՀԶ, էջ 51:

3 Նույն տեղում, էջ 14-15:

տարբեր առիթներով պոետը ոտանավորներ է նվիրել: Այդ քչերից է Պոռոշյանը: Առիթը վիպասանի գրական գործունեության 40-ամյակն էր, որը նշվել է 1899 թ.: Խոսքը վերաբերում է «Մեր ազգային վիպասան պերճ Պոռոշյանին՝ իր քառասնամյակին («Այնտեղ ծնված ու մեծացած...»)» բանաստեղծությանը, որտեղ հորեյարին անվանում է՝ «Մեր ազգային վիպասան», «ազգի վերքերն ողբերգող»՝ Աբովյանի լավագույն հետևորդ, «հայ գյուղացու ցավերին լեզու տվող արվեստագետ»: Թումանյանը չէր սխալվում. Պոռոշյանը ինքն իր «Հուշիկներում» և ինքնակենսագրության մեջ խոստովանել է, որ իր առաջին վեպը՝ «Սոս և Վարդիթերը», գրել է Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի խոր ազդեցության տակ:

Հորեյանի օրը՝ 1899 թ. մայիսի 16-ին, ամենից բարձր հնչեց Թումանյանի հոգեբուխ խոսքը՝ «Մեր ազգային վիպասան Պերճ Պոռոշյանցին՝ իր քառասնամյակի օրը».

Դու ընտրեցիր քեզ ուսուցիչ
Ազգի վերքերն ողբերգողին,
Քառսուն տարի ծեռքիդ գլորիչ,
Անցար, բռնած նորա ուղին:

Հայ գյուղացին ցավեր ուներ
Խեղդված իրան խուլ խրճիթում,
Այն ցավերին լեզու տըվիր
Ու խոսեցրիր ամեն սըրտում:

Այդ սրբազան գործի համար,
Այժմ ահա ծեր օրերիդ,
Մենք գայիս ենք երախտապարտ
Պըսակ դնել ալիքներիդ:
Եվ թող ապրի անմահ փառքով,
Ով որ ցավը թույլ թըշվառի
Կարեկցության հզոր խոսքով
Դարձնում է ցավն իր աշխարհի:

Այսպես, Հովհաննես Թումանյանի համար Պերճ Պոռոշյանը մնաց Մասիսի պես վիթխարի, ծանր ու մռայլ հայի լեռնացած վշտերի, գյուղացու ցավերի անկեղծ արտահայտիչ, ցավերի, որոնք նույնքան Պոռոշյանին էին, որքան գյուղացուն, ցավեր, որոնք լեզու առան և կման մեր գրականության մեջ Պոռոշյանի գրչի շնորհիվ:

СУСАННА ОВАНЕСЯН: - ПЕРЧ ПРОШЯН В СИСТЕМЕ ИСТОРИКО-ЛИТЕРАТУРНЫХ ВЗГЛЯДОВ И В ЛИЧНОЙ ЖИЗНИ ОВАНЕСА ТУМАНЯНА - Перч Прошян – один из тех писателей, с творчеством которого Ованес Туманян был связан прочным и непосредственным образом. Молодой Туманян перенял литературные традиции Прошяна, которые оказали определённое воздействие на формирование творческого портрета поэта. Однако традиции эти были преодолены довольно скоро, ещё до достижения литературной зрелости.

Туманян многократно обращался к творчеству Прошяна и ценил его роль в истории армянской литературы 1870-1880-х гг. Значение произведений романиста поэт видел в реалистическом изображении жизни деревни, в создании правдивых образов.

Представлявших разные поколения и живших в одном и том же городе писателей-современников связывали искренние дружеские отношения. Они часто встречались на разных перекрёстках жизни, совместно служа интересам национальной культуры и литературы.

SUSANNA HOVHANNISYAN: - PERCH PLEASED IN THE SYSTEM OF HISTORICAL AND LITERARY VIEWS AND IN PERSONAL LIFE OF HOVHANNES TUMANYAN: - Persh Proshyan is one of those writers with whose work Hovhannes Tumanyan was connected in a strong and direct way. Young Tumanyan adopted Proshyan's literary traditions, which had a definite effect on the formation of the poet's creative portrait. However, these traditions were overcome quite very soon, before he reached literary maturity.

Tumanyan repeatedly turned to Proshyan's work and appreciated his role in the history of Armenian literature of the 1870-1880s. The poet saw the significance of the novelist's works in a realistic depiction of the life of the village, in the creation of true images.

Representing contemporary generations and living in the same city, these two contemporary writers were linked by sincere friendships. They often met at different crossroads of life, together serving the interests of national culture and literature.

Reference- Proshyan (in Armenian)